

Երգի խոսքերը՝ աղջիկ Օսաննա, Երի-Երի, Օսաննա, Օսաննա, ախ յար, դու ինձ մի մոռնա: տղա Օսաննա, կըրակն առա մահանա, Օսաննա, արի մեր տուն ու մնա: Օսաննա, թելիկ-մելիկ, Օսաննա, Օսաննա, քո դարդին չեմ դիմանա: Օսաննա, սևիկ սիրուն Օսաննա, Օսաննա, պաչեմ խալիսը չիմանա: աղջիկներ Աղբյուրի մոտ կացել եմ, յա՛ր, յա՛ր, Իմ սերը քեզ բացել եմ, յա՛ր, յա՛ր: Հեռացել՝ մոռացել ես, յա՛ր, յա՛ր, Հոնգուր-հոնգուր լացել եմ, յա՛ր, յա՛ր: տղաներ Աչք ունես յարի վըրա, յա՛ր, յա՛ր, Ման արի սարի վըրա, յա՛ր, յա՛ր, Բեզարես՝ գլուխըդ դիր, յա՛ր, յա՛ր, Մեր դրճան քարի վըրա, յա՛ր, յա՛ր: աղջիկներ Մազերըս շաղ եմ տըվել, յա՛ր, յա՛ր, Ուսիցըս կախ եմ տըվել, յա՛ր, յա՛ր, Ինչ ձեր տուն հարս եմ եկել, յա՛ր, յա՛ր, Շնորհք ու շախ եմ տըվել, յա՛ր, յա՛ր: տղաներ Ծառի տակին ճաշ կանեմ, յա՛ր, յա՛ր, Հարսանիքիդ տաշ կանեմ, յա՛ր, յա՛ր, Ես իմ ջահել տեղովըս, յա՛ր, յա՛ր, Սիրտըդ հալումաշ կանեմ, յա՛ր, յա՛ր: